փափագները, մենք հարցրինք գինու մասին: Նա շփոթած մնաց եւ, երկար մտածելուց յետոյ, պատասխանեց.

— Կարծեմ պէտք է, որ մի քիչ գտնոի. վանահայրը կէս շիշ պահած ունէր «բաժակի» համար:

Յետոյ նա նստեց մեզ մօտ, սկսեց մի առանձին հոգածութեամբ պատմել, թէ շատ անգամ մեծ դժուարութիւններ են կրում, երբ «բաժակի» գինին սպառւում է, եւ վանահայրը համարեա միշտ մի հրաշքով է ձեռք բերում, որ սուրբ խորհուրդը կատարոի: Եւ աւելացրեց, թէ ինքը չէ իմանում ե՞րբ կամ ի՞նչ ժամանակ է պատահել, բայց լսել է, որ Վան քաղաքի մօտ մի վանք կայ, որ կոչւում է «կռունկի վանք». մի անգամ սուրբ խորհուրդը կատարելու միջոցին պատարագիչ հայր սուրբը տեսնում է, որ գինի չկայ եւ, չկամենալով ընդհատել պատարագը, մինչեւ գնային, գտնէին եւ բերէին, նա սկսում է աղօթել: Յանկարծ, աստուծոյ հրամանով, մի կռունկ թռչելով ներս է մտնում տաճարի լուսամուտից եւ, իր կտցի մէջ բռնած, երեւում է խաղողի մի ողկոյզ: Նա ուղիղ մօտենում է սուրբ խորհրդի սեղանին. պատարագիչը առնում է նրա կտուցից ողկոյզը եւ քամում է սկիհի մէջ: Այն օրից այդ վանքը կոչոեցաւ «կռունկի վանք»:

Աբեղայի պատմութիւնը բաւական էր, որ թէ՛ ես եւ թէ՛ Ասլանը հրաժարոէինք մեր բաղձանքից եւ նրանց այնպիսի մի դժուար դրութեան մէջ չդնէինք, որ ստիպած լինէին թռչունների միջոցով գինի ստանալ, թէեւ նրա պատմութիւնը այդ նպատակով ասուած չէր, այլ աւելի այն նպատակով, որ երիտասարդ աբեղան ցոյց տայ, թէ ինքն էլ մի բան գիտէ:

— Մեր վանքումը, — ասաց նա, — ոչ մի ըմպելիք չէ գործածւում, բացի ջրից: Ուխտաւորներին անգամ արգելուած է իրանց հետ ըմպելիքներ բերել:

Այդ միջոցին լսելի եղաւ ճաշոայ ժամի կոչնակի ձայնը: Թէեւ այդ անապատը եկողը պէտք է հետեւեր վանական բոլոր կանոններին, բայց աբեղան, խնայելով մեզ, մեր հետ պատահած դժբախտութեան պատճառով, չպահանջեց մեզանից իսկոյն եկեղեցի գնալ, այլ, ներողութիւն խնդրելով, ինքը հեռացաւ, խոստանալով, որ պատարագը վերջացնելուց յետոյ դարձեալ կը գայ եւ մեզ կտանէ սեղանատունը ճաշելու:

Խուցը, որ պատրաստել էին մեզ համար, ի հարկէ, վանքում գտնուած ամենամաքուր, ամենայարմարաւոր օթեւաններից մէկն էր: Բայց դա եւս ուրիշ ոչնչի նման չէր, եթէ ոչ մի մթին հաւաբոյնի նման: Յատակը ծեփած էր կաւով, որի վրայ, իբրեւ սփռոց, տարածել էին պրտուներից եւ ճահճային բոյսերից գործած մի հասիր (փսիաթ): Բայց մեզ պատոելու համար՝ աւելացրել